

Հ Բ Ա Դ Է Բ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

“ՀԱՆԳԷՍ ԱՄՍՕՐԷԻ,”

Գ. ՅԱՐԻ, 1890

Փակեցաւ ՀԱՆԳԻՍԻՍԻ Գ. Տարւոյ շրջանն, եւ յաջորդ թուով կը բացուի Դ. Տարեշրջանն: Թերթս քիչ ժամանակի մէջ կազմեց իրեն համակրողաց շրջան մը, որ անտարակոյս առաջիկայ տարին աւելի եւս պիտի ընդարձակի: Ազգային գիտութեան այլեւայլ ծիւղերն զարգացընել, գիտութեանց եւ արուեստից յառաջադիմութիւնքն ծանօթացընել, ասոնք ՀԱՆԳԻՍԻ Նկարագիրը կը կազմեն եւ ազգային թերթերու մէջ իրեն առանձին տեղ մը կը շնորհեն: Սոյն Նկարագիրն առաջիկայ տարին աւելի եւս պայծառ եւ կենդանի պիտի երեւայ: Ազգային գրականութեան, լեզուի եւ պատմութեան վերաբերեալ յօդուածներ, գիտութեանց եւ արուեստից քազմակողմանի եւ կարեւոր տեղեկութիւններ պիտի մատակարարուին մեր ընթերցողաց: Եւ որովհետեւ ազգն վերջին ժամանակներս գեղարուեստից առանձին միտութիւն եւ քաղձանք կը ցուցնէ, ընթերցողաց ցանկութեան համեմատ թերթին արտաբերին չքեղութեան մասնատր միտ պիտի դրուի, եւ զարդերով ու պատկերներով հայ տպագրութեան արուեստին համըաւն ու պատինն առաւել եւս մեծցընելու պիտի ջանացուի:

Տարւոյս վերջն մեր շնորհակալութիւնն հրապարակաւ կը յայտնենք մեր Գործակցաց եւ Գործակալաց, որոնք ազնուարար իրենց աջակցութիւնը մատուցին մեզի: Եոյն ձեռնտուութիւնը կը խնայենք նաեւ առաջիկայ տարին: Եոյնպէս մեր յարգւոյ քաժանորդները կը հրաւիրենք փութով նորոգելու քաժանորդագրութիւնն:

ՀԱՆԳԻՍԻ ծաւալն նոյն կը մուս առաջիկայ տարին, ինչպէս նաեւ քաժանորդութեան պայմաններն:

ՀԱՆԳԻՍԻ առաջիկայ տարւոյ քաժանորդներն տարւոյն վերջը կ'ընդունին մէջ մէկ օրինակ նոր վէպ, իրեն յաւելուած ամբողջ տարեշրջանին: Իսկ այս տարւոյ քաժանորդաց վիճակաւ տրուած գրքերն, որ ծածկիս 3^ր երեսը նշանակուած են, խմբագրութենէս կ'ուղարկուի իւրաքանչիւր հասցէին:

 ՀԱՆԳԻՍԻ Դ. Շրջանի առաջին թիւն կ'ուղարկուի այս տարւոյ ամէն քաժանորդաց: Երկրորդ թիւն կ'ուղարկուի միայն անոնց, որոնք իրենց քաժանորդագրութիւնը նորոգած են դիմելով մեզի կամ՝ մեր գործակալաց:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ “ՀԱՆԳԻՍԻ,”